ArmLur.am

ISSN 1829-2763 26134

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

134
(3343)

16 հոկտեմբերի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

100 դրամ

Ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՐԵՎԱՆԸ ԽՑԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ Է




Երեւանում երեկվանից մեկնարկել են COP17-ի շրջանակում նախատեսված միջոցառումները, որոնք շարունակվելու են մինչեւ հոկտեմբերի 30-ը ներառյալ: Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էր «Ժողովուրդ» օրաթերթը, Հայաստան է ժամանելու շուրջ 15 հազար մարդ, իսկ միջոցառումներին մասնակցելու նպատակով սպասվում են 190 տարբեր երկրների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Միջոցառումների կազմակերպման եւ անվտանգության ապահովման նպատակով իշխանությունները տարբեր սահմանափակումների ու փոփոխությունների մասին հայտարարություններ են տարածել: Արդյունքում պետական համակարգի մի շարք կառույցներ երեկվանից անցել են առցանց աշխատանքի, իսկ հոկտեմբերի 19-ից դպրոցների մի մասն էլ ուսումնական գործընթացը կկազմակերպի առցանց եղանակով: Երեկվանից Կենտրոնի մի շարք դպրոցներ արդեն հեռավար են աշխատում:


Մինչ իշխանությունները պատրաստվում են միջազգային միջոցառումների անցկացմանը, Երեւանի բնակիչները կանգնած են առօրյա տեղաշարժի լուրջ խնդիրների առաջ: Մայրաքաղաքի տարբեր փողոցներում առաջացած խցանումները, երթեւեկության սահմանափակումներն ու գերատեսչությունների՝ մեկը մյուսին հաջորդող հայտարարությունները քաղաքացիների շրջանում անորոշություն են ստեղծել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Ա բովյանի համայնքապետի պաշտոնի համար պայքարին պատրաստվում է միանալ Արթուր Հարությունյանը, որը հանրությանը հայտնի է Գագիկ Ծառուկյանի թիկնապահ «Պալաչ» մականունով: Սակայն նրա անցյալում կա ուշագրավ դատական պատմություն. 2017 թվականին դատարանը նրան սնանկ է ճանաչել 3 միլիոն դրամի պարտքը սահմանված ժամկետում չվերադարձնելու հիմքով: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը: Ըստ այդմ, 2017 թվականի դեկտեմբերի 19-ին դատավոր Տ. Փոլադյանը բավարարել է Արտակ Եղոյանի դիմումը եւ Արթուր Գեղամի Հարությունյանին ճանաչել սնանկ: Դատարանի վճռով որոշվել է նաեւ Արթուր Հարությունյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձման ենթակա 100 հազար դրամ պետական տուրքը գրանցել սնանկության վարույթի շրջանակում՝ որպես դատական ծախս: Բացի այդ, դատարանը որոշել է արգելանք դնել Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա: Արթուր Հարությունյանի՝ Աբովյանի համայնքապետի պաշտոնի համար պայքարին մասնակցելու մտադրության ֆոնին նրա գործարար անցյալի այս դրվագը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր է առաջացնում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



«Ժ ողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Լուսինե Բադալյանի՝ Ռուսաստանի Դաշնություն մուտք գործելու արգելքի շուրջ հարցեր են առաջացել: Նշենք, որ նախորդ օրը ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Լուսինե Բադալյանը հայտարարեց, որ պետք է մեկներ Սանկտ Պետերբուրգ՝ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի սոցիալական քաղաքականության եւ մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի նիստին մասնակցելու համար, սակայն ռուսական կողմն արգելել է իր մուտքը երկիր: Բադալյանի փոխանցմամբ՝ իրեն հայտնել են, որ իր մուտքը Ռուսաստանի Դաշնություն արգելված է, սակայն չեն պարզաբանել դրա պատճառը: Ստացվում է՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին, որը մեկնում էր պաշտոնական միջոցառման մասնակցելու, սահմանին կանգնեցրել են՝ առանց իրեն, առնվազն հրապարակայնորեն, հասկանալի բացատրություն ներկայացնելու: «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ Բաղալյանի արգելքը կապված է նրա հակառուսական հայտարարություններով: Իսկ ինչո՞վ է աչքի ընկել Լուսինե Բադալյանը Ռուսաստանի հետ կապված իր հայտարարություններով: Բանն այն է, որ ՔՊ-ական պատգամավորը նախկինում հանդես է եկել ռուսական հեռուստաալիքների հեռարձակումը Հայաստանում դադարեցնելու առաջարկով՝ պնդելով, որ դրանց բովանդակությունը հակահայկական է եւ սպառնում է Հայաստանի անվտանգությանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



«Ժ ողովուրդ» օրաթերթին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել ԱԺ փոխնախագահ Հայկ Կոնջորյանի եղբոր՝ Ավետ Կոնջորյանի մասնակցությամբ քրեական վարույթի ընթացքից: Մեր տեղեկություններով՝ նախաքննական մարմինը Քննչական կոմիտե է հրավիրել Ավետ Կոնջորյանին ծեծի ենթարկելու համար մեղադրվող հինգ անձանց եւ միջադեպին առնչվող միակ կին վկային՝ Կոնջորյանի գործողությունների վերաբերյալ ցուցմունք տալու նպատակով: Սակայն հրավիրված անձինք հրաժարվել են ցուցմունք տալ ԱԺ փոխնախագահի եղբոր դեմ: Ինչպես կասեր նախկին ոստիկանապետը՝ «գողական են գնացել» եւ ցուցմունք չեն տվել: Հիշեցնենք՝ հուլիսի 24-ի գիշերը Աբովյանում՝ իր տան մոտ, Ավետ Կոնջորյանը ծեծի էր ենթարկվել, ինչի առթիվ քրեական վարույթ էր նախաձեռնվել: Միջադեպին նախորդել էին շինարարական ընկերության շուրջ Կոնջորյանի եւ Չարենցավանի ավագանու ՔՊ-ական անդամի միջեւ տարաձայնությունները, որոնք լարել էին հարաբերությունները: «Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ հայտնել էր, որ Ավետ Կոնջորյանին ծեծի ենթարկելու գործով հինգ անձի մեղադրանք է առաջադրվել: Նրանցից երկուսի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել էին բացակայելու արգելքը եւ 2 միլիոն դրամ գրավը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի նոյեմբերի 3-ին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՍԱ ՆԱԵՎ ՈՒՂԵՐՁ Է ԱԴՐԲԵՋԱՆԻՆ»

ArmLur.am-ի զրուցակիցը ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Հակոբ Ասլանյանն է (սկիզբը՝ նախորդ համարներում):

- Պարոն Ասլանյան, վերադառնանք Ազգային ժողովի բարեվարքության կանոններին: Ընդդիմության ներկայացուցիչները կարծում են, որ տեղի ունեցած միջադեպը հրահրվել է իշխող ուժի կողմից՝ հանրության ուշադրությունն այլ ուղղությամբ շեղելու նպատակով: Մասնավորապես, խոսքը վերջերս ադրբեջանցի զինծառայողի՝ Հայաստանի տարածք ներթափանցելու եւ հայ կնոջ վրա կրակելու դեպքի մասին է: Դուք կիսո՞ւմ եք այս տեսակետը: Ի՞նչ ենթատեքստեր եք տեսնում տեղի ունեցածում:

- Եթե Դուք այս հարցը չբարձրացնեիք էլ, ես արդեն ասել եմ, որ սպասելի էր՝ հանրային քննարկման դաշտ կնետվի մի թեմա, որը կփորձի ստվերել տեղի ունեցածը:

Իմ կարծիքով՝ սա եւս մեկ անգամ ցույց է տալիս, թե ինչպես կարող է իշխանությունը մանիպուլյացիաների միջոցով շեղել հանրության ուշադրությունը: Մանիպուլյացիայի էությունը հենց դա է՝ իրական խնդրի փոխարեն առաջ բերել մեկ այլ, կեղծ օրակարգ եւ հանրությանը հեռացնել բուն հարցից:


Ես չգիտեմ՝ ինչ փաստարկներ են ներկայացնում մյուսները, բայց վստահ եմ, որ տեղի ունեցածի գնահատման համար պետք է առաջնորդվել օրենքով եւ պատասխանատվության հարցը դիտարկել շատ հստակ:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ նախատեսված է պատասխանատվություն պետական սահմանն ապօրինի հատելու համար: Օրենքը չի սահմանում, որ պատասխանատվությունը կախված է անձի ազգային պատկանելությունից: Եթե անձն ապօրինի հատել է Հայաստանի պետական սահմանը, ապա նրա արարքը պետք է իրավական գնահատական ստանա:

Բնականաբար, հարց է առաջանում նաեւ, թե ինչպես է հնարավոր եղել, որ նա ապօրինի մուտք գործի երկրի տարածք: Պետական սահմանների պահպանության եւ երկրի անվտանգության համար պատասխանատու են համապատասխան պետական կառույցները: Եթե անվտանգության համակարգը չի կանխել նման ներթափանցումը, ապա պետք է պարզել, թե ինչու են այդ կառույցները թերացել իրենց պարտականությունների կատարման մեջ:

Բացի այդ, երկրի անվտանգության ապահովման հարցում պատասխանատվություն է կրում նաեւ պետության քաղաքական ղեկավարությունը: Հետեւաբար, պետք է պատասխանել ոչ միայն այն հարցին, թե ով է ներթափանցել երկիր, այլեւ՝ ինչպես է դա հնարավոր դարձել:

Հիշեցնեմ նաեւ, որ դեպքից հետո շրջանառվում էին տարբեր բացատրություններ, այդ թվում՝ մառախուղի առկայության մասին: Ես չեմ կարծում, որ նման բացատրություններով կարելի է փակել



հարցը: Անհրաժեշտ է մանրամասն եւ անաչառ քննություն:

- Լրատվամիջոցների հրապարակումների համաձայն՝ ադրբեջանական կողմը նախապես տեղեկացրել էր Հայաստանի ազգային անվտանգության ծառայությանը, որ իր զինծառայողներից մեկը ինքնակամ լքել է զորամասը: Այդ տեղեկությունը, ըստ հրապարակումների, փոխանցվել է դեպքից մի քանի օր անց: Ինչպե՞ս եք գնահատում այս հանգամանքը: Եթե զինծառայողը դասալիք էր, արդյո՞ք դա փոխում է տեղի ունեցածի գնահատականը:

- Իմ կարծիքով՝ դա չի փոխում հարցի էությունը: Կարեւոր չէ՝ եղել է մառախուղ, թե ոչ, կամ ադրբեջանական կողմն ինչ բացատրություն է ներկայացնում: Եթե զինծառայողն ապօրինի հատել է Հայաստանի պետական սահմանը, ապա նա պետք է պատասխանատվության ենթարկվի Հայաստանի օրենքներով:

Նույնիսկ եթե ընդունենք, որ նա մոլորվել է, դա ինքնին չի նշանակում, որ նրա արարքը չպետք է իրավական գնահատական ստանա: Նա պետք է ձերբակալվեր, եւ գործի հանգամանքները պետք է քննվեին Հայաստանի իրավապահ մարմինների կողմից:

Բացի սահմանն ապօրինի հատելուց՝ պետք է քննության առնվի նաեւ հայ կնոջ վրա կրակելու հանգամանքը: Եթե հաստատվի, որ նա փորձել է սպանել կնոջը, ապա այդ արարքը պետք է համապատասխան քրեաիրավական գնահատական ստանա:

Այսինքն՝ պետք է քննվեն նրա գործողությունները, դրանց շարժառիթները եւ հնարավոր հանցակազմերը: Ըստ այդմ՝ պետք է որոշվի նաեւ նրա պատասխանատվության շրջանակը:

Եթե Հայաստանի իշխանությունները նրան հանձնեն Ադրբեջանին՝ առանց Հայաստանում տեղի ունեցածի պատշաճ քննության եւ իրավական գնահատման, դա, իմ կարծիքով, կարող է ընկալվել որպես պատասխանատվությունից խուսափելու դրսեւորում:

Միեւնույն ժամանակ ուզում եմ առանձնահատուկ ընդգծել այդ կնոջ խիզախությունը: Նա իր ընտանիքի եւ երեխաների կյանքը պաշտպանելու համար դրսեւորել է մեծ կամք ու համարձակություն: Փառք ու պատիվ նրան:

Մեր կուսակցությունը երկու օր առաջ արդեն հայտարարություն է տարածել՝ առաջարկելով հանրությանը միանալ այն նախաձեռնությանը, որով ցանկանում ենք այդ կնոջը Հայաստանի Հանրապետության ազգային հերոսի կոչում շնորհելու հարցը բարձրացնել:

Ինձ համար սա պարզապես մեդալի կամ պարգեւի հարց չէ: Սա նաեւ ուղերձ է Ադրբեջանին, որ հայ ժողովուրդն ունի իր ընտանիքը, իր հայրենիքը եւ իր անվտանգությունը պաշտպանելու կամք:

Ես կարծում եմ, որ այս միջադեպը կարող էր նպատակ ունենալ ստեղծելու որոշակի իրավիճակ եւ ստուգելու, թե ինչպես կարձագանքի հայ հասարակությունը: Իշխանությունների դիրքորոշումը, թերեւս, արդեն հայտնի է, բայց այդ կնոջ պահվածքը ցույց տվեց, որ հասարակության մեջ կան մարդիկ, որոնք պատրաստ են մինչեւ վերջ պայքարել իրենց ընտանիքի անվտանգության համար:

- Դուք համոզված եք, որ խոսքը դիվերսանտի մասին է: Սակայն ադրբեջանական կողմը պնդում է, որ իր զինծառայողը դասալիք է: Եթե երկու երկրներն ընթանում են խաղաղության հաստատման գործընթացով, եւ Հայաստանի իշխանությունները հայտարարում են խաղաղ դարաշրջանի մեկնարկի մասին, ապա ինչպե՞ս պետք է գնահատել նման միջադեպը: Արդյո՞ք այն նպաստում է խաղաղ մթնոլորտի ձեւավորմանը:

- Շատ ճիշտ հարց եք բարձրացնում: Եթե նա իսկապես մոլորված լիներ, ապա տրամաբանական կլիներ, որ զենքը վայր դներ, մոտենար համապատասխան մարմիններին, հանձնվեր եւ բացատրեր, որ մոլորվել է: Այդ դեպքում հնարավոր կլիներ պարզել՝ ինչ է տեղի ունեցել եւ ինչ հանգամանքներում է նա հատել սահմանը:

Սակայն, եթե զինված անձը ներթափանցում է Հայաստանի տարածք եւ կրակ է բացում հայ կնոջ ուղղությամբ, ապա նրա գործողությունները չեն կարող պարզապես բացատրվել նրան դասալիք ներկայացնելով: Եթե նա դասալիք է, ապա, հնարավոր է, հանցանք է կատարել նաեւ Ադրբեջանի օրենքներով: Բայց դա չի նշանակում, որ նա չպետք է պատասխանատվության ենթարկվի Հայաստանում իր կատարած արարքների համար:

Խաղաղության մասին հայտարարությունները պետք է համապատասխանեն իրականությանը: Եթե մենք խոսում ենք խաղաղության մասին, ապա պետք է նաեւ ապահովենք սահմանների անվտանգությունը, պաշտպանենք քաղաքացիներին եւ յուրաքանչյուր նման միջադեպի դեպքում գործենք օրենքի շրջանակներում:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՁԱՆԱՉՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ

Կառավարությունն այսօրվա նիստում ընդունել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումը:

Որոշման հիմնավորման համաձայն՝ ՀԷՑ-ն իրականացնում է էլեկտրաէներգիայի բաշխում Հայաստանի ամբողջ տարածքում: Ընկերության գործունեությունից է կախված բնակչության, հիվանդանոցների, դպրոցների, ջրամատակարարման համակարգերի, կապի եւ տնտեսության բնականոն աշխատանքը: Հիմնավորման մեջ նշվում է, որ էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերը ռազմավարական ենթակառուցվածք են, եւ դրանց անխափան աշխատանքի ապահովումը հանրային նշանակություն ունի: Որոշման ընդունման արդյունքում ՀԷՑ-ի 100 տոկոս բաժնետոմսերի նկատմամբ կճանաչվի հանրության գերակա շահ:

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՊԵՏՔ ԷՐ ԿԻՐԱՌԵԼ

Բաքվի ղեկավարը կրկին մեղադրանքներ է հնչեցրել ՀՀ-ի հասցեին՝նշելով, թե իբր «նրանք, ովքեր սպառնում էին տանկերով գալ եւ օկուպացնել Բաքուն, այսօր ադրբեջանական թեյ են խմում ադրբեջանական բանտերում, իսկ նրանց տանկերը ցուցադրված են Ռազմական ավարների պուրակում»: Այս մասին Ալիեւը հայտարարել է Բաքվում անցկացվող Ասիայում փոխգործակցության եւ վստահության ամրապնդման միջոցների խորհրդակցության 7-րդ գագաթնաժողովում ունեցած ելույթի ժամանակ: «Նրանք, ովքեր ժամանակին սպառնում էին տանկերով հասնել Բաքու եւ գրավել քաղաքը, այժմ ադրբեջանական բանտերում ադրբեջանական թեյ են խմում, մինչդեռ նրանց տանկերը ցուցադրված են Ռազմական ավարի պուրակում: Այս հարցը համաշխարհային նշանակություն ունի, եւ հենց այդ պատճառով եմ ես այն առանձնահատուկ ընդգծել: Եթե «Հայաստանի նկատմամբ ժամանակին պատժամիջոցներ կիրառվեին՝ օկուպացիայի, ցեղասպանության եւ էթնիկ զտումների համար», Ադրբեջանը ստիպված չէր լինի մարտի դաշտում ջարդել «հայկական ֆաշիզմի ողնաշարը»: Պատերազմը մեր ընտրությունը չէր. «այն մեզ պարտադրվեց Հայաստանի կողմից»»:

ԱՇԽԱՏԵԼՈՒ Է ՀԵՌԱՎԱՐ

ՄԻՊ գրասենյակից տեղեկացնում են, որ Հայաստանի Հանրապետությունում նախանշված մեծածավալ միջոցառումների անցկացման նպատակով երթեւեկությունը բեռնաթափելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը 2026 թվականի հոկտեմբերի 16-ին, 27-ին եւ 28-ին աշխատելու է հեռավար, բացառությամբ՝ ՄԻՊ աշխատակազմի մարզային ստորաբաժանումների: Աշխատանքներն իրականացվելու են աշխատանքային օրերի մշտական գրաֆիկով: 24/7 ռեժիմով գործելու է թեժ գծի 096116100 հեռախոսահամարը: Նշված օրերին դիմումները կընդունվեն առցանց՝ombuds@ombuds.am:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ Է ՍՏԵՂԾԵԼ

ArmLur.am-ը տեղեկություններով վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ աշխատանքային խումբ կստեղծվի՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կոնցեսիոն կառավարման արդյունավետության հետ կապված խնդիրները քննարկելու եւ դրանց լուծման հնարավորությունները գտնելու նպատակով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ աշխատանքային խումբ ստեղծելու պայմանավորվածությունը ձեռք է բերվել հոկտեմբերի 14-ին Հայաստանի վարչապետի եւ «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի միջեւ կայացած հանդիպման ընթացքում: Աշխատանքային խմբի հիմնական նպատակը «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության կոնցեսիոն կառավարման արդյունավետության հետ կապված խնդիրների քննարկումն է, դրանց լուծման հնարավորությունների որոնումը եւ հետագա քայլերի համաձայնեցումը:

Փաստաթղթով սահմանվել է, որ աշխատանքային խումբը պետք է երեք ամսվա ընթացքում գտնի առկա խնդիրների լուծման հնարավորությունները: Որոշման մեկ այլ կետով հաստատվել է աշխատանքային խմբի կազմը:

Թե կոնկրետ ինչ խնդիրներ են արձանագրվել «Հարավկովկասյան երկաթուղու» կառավարման արդյունավետության հետ կապված, եւ ինչ փոփոխություններ կարող են հաջորդել աշխատանքային խմբի քննարկումներին դեռ հայտնի չէ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՐԶՈՅԱՆՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է

Հայաստանի արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարար Արարատ Միրզոյանը ԵԱՀԿ գործող նախագահի, Շվեյցարիայի Համադաշնության արտաքին հարաբերությունների դաշնային դեպարտամենտի ղեկավար Իգնասիո Կասիսի հետ համատեղ ասուլիսին անդրադարձել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ անկլավ-էքսկլավների խնդրի լուծման հնարավորություններին, գրում է shantnews.am-ը:

Միրզոյանը շեշտել է, որ անկլավ-էքսկլավների փոխանակումը լուծման հնարավոր տարբերակներից մեկն է, տեսականորեն կարող են լինել նաեւ այլ տարբերակներ: «Կարող եմ ասել, որ ադրբեջանական կողմից եւս կա կառուցողական մոտեցում այս հարցի նկատմամբ»,- եզրափակել է ՀՀ ԱԳՄՆ նախարարը:

Ավելի վաղ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել էր. «Հայաստանը պետք է ունենա 29 հազար 743 քառակուսի կիլոմետր տարածք: Սահմանների սահմանազատումը եւ սահմանագծումը Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա պետք է տեղի ունենա այս տրամաբանությամբ: Անկլավ-էքսկլավների խնդիրը պետք է լուծվի հետեւյալ բանաձեւով՝ սահմանի այս եւ այն կողմում անկլավներ եւ էքսկլավներ չպետք է լինեն, այսինքն՝ երկու երկրները՝ Հայաստանը եւ Ադրբեջանը, համապատասխան ճշգրիտ չափերի տարածքների փոխանակում պետք է իրականացնեն»,- ասել էր Փաշինյանը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործադիրը փոփոխություններ է կատարել «Տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի չափորոշիչները սահմանելու մասին» որոշման մեջ՝տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի չափորոշիչներում նոր տառերի եւ թվերի համադրություններ սահմանելու անհրաժեշտությամբ պայմանավորված, փոխանցում է shantnews.am-ը: Որոշմամբ նախատեսվում է ներառել նաեւ «XYZ» թվերի համադրությամբ համարանիշերի ձեւաչափը՝հաշվի առնելով քաղաքացիների հետաքրքրվածությունը նման համարանիշերի նկատմամբ եւ ապահովելով մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի համադրությունների ամբողջականությունը: Արդյունքում, կընդլայնվի քաղաքացիներին առանց աճուրդի տրամադրվող մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի շրջանակը, ինչպես նաեւ կապահովվի տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նախատեսվող համադրությունների ամբողջականությունը:

850 «ՇԱՀԵԴ»

Նախորդ օրվանից ի վեր Ռուսաստանը Ուկրաինայի ուղղությամբ արձակել է ավելի քան 850 «Շահեդ» հրթիռ: Այս մասին հաղորդում է RBC-Ukraine-ն՝ հղում անելով Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկիի գրառմանը:

«Շահիդների» զանգվածային հարձակումը շարունակվել է գրեթե երեկվա ամբողջ ընթացքում: «Մեր երկինքը մեկ ժամ անգամ չէր մաքրվում դրանցից», - ընդգծել է Զելենսկին:

ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԱՐԳԵԼՔՆԵՐ

ՔՊ-ԻՑ ՈՎՔԵՐ ԵՆ ՌԴ «ՄԵՎ» ՑՈՒՑԱԿՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել է, որ Ռուսաստանի Դաշնություն մուտք գործելու արգելքի է բախվել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Լուսինե Բադալյանը: Նա պետք է պատվիրակության կազմում մեկներ Սանկտ Պետերբուրգ՝ մասնակցելու միջգերատեսչական համաժողովի, սակայն օդանավակայանում նրան տեղեկացրել են, որ իր մուտքը ՌԴ արգելված է:



Մինչ Լուսինե Բադալյանը հարկադրված է եղել մնալ Հայաստանում, պատվիրակության մյուս անդամներն արդեն մեկնել են Սանկտ Պետերբուրգ եւ մասնակցում են նախատեսված միջոցառմանը:

Ի՞նչն է պատճառը, որ ռուսական կողմը Հայաստանի իշխող ուժի ներկայացուցչին թույլ չի տվել մուտք գործել երկիր, եւ արդյոք սա քաղաքական հաշվեհարդարի հերթական դրսեւորումն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս պատմությունը պետք է դիտարկել նաեւ Հռոմի ստատուտի շուրջ հայ-ռուսական լարվածության համատեքստում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Ռուսաստանի Դաշնություն մուտք գործելու արգելքներ են կիրառվել նաեւ Հասմիկ Հակոբյանի, Ծովինար Վարդանյանի եւ Մարինա Ղազարյանի նկատմամբ: Ըստ մեր տեղեկությունների՝ այս սահմանափակումները եւս կապված են Հռոմի ստատուտի վերաբերյալ նրանց հնչեցրած հայտարարությունների եւ այդ հարցում զբաղեցրած դիրքորոշման հետ:

Ստացվում է՝ ռուսական կողմի դժգոհությունը, մեր աղբյուրների փոխանցմամբ, չի սահմանափակվել միայն մեկ քաղաքական գործչով: Մուտքի արգելքի են բախվել նաեւ այլ անձինք, որոնք Հռոմի ստատուտի շուրջ քննարկումների ժամանակ հանդես են եկել կոշտ հայտարարություններով: Այս հանգամանքը հարց է առաջացնում՝ արդյոք Մոսկվան քաղաքական հայտարարությունների համար անցանկալի է համարում Հայաստանի իշխանական շրջանակների որոշ ներկայացուցիչների եւ նրանց նկատմամբ պատժիչ միջոցներ կիրառում:

Հիշեցնենք, որ Հռոմի ստատուտի վավերացումը լուրջ տարաձայնություններ էր առաջացրել Երեւանի եւ Մոսկվայի միջեւ: Ռուսաստանը դժգոհություն էր հայտնել Հայաստանի այդ քայլի կապակցությամբ՝ հաշվի առնելով Միջազգային քրեական դատարանի՝ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին ձերբակալելու օրդերը: Այդ ֆոնին հայաստանյան պաշտոնյաների հայտարարությունները եւս դարձել էին քաղաքական քննարկումների առարկա:

Սակայն փոխադարձ սահմանափակումների պատմությունը միայն այս ուղղությամբ չէ:

Հայաստանի Հանրապետությունն էլ իր հերթին արգելել է Ռուսաստանի որոշ ներկայացուցիչների մուտքը երկիր: Մասնավորապես, Հայաստան մուտք գործելու արգելքի մասին հայտնի է դարձել ՌԴ Պետդումայի պատգամավոր Կոնստանտին Ջատուլինի եւ մեդիագործիչ Մարգարիտա Սիմոնյանի դեպքում:

Այսպիսով, երկու երկրների միջեւ քաղաքական հակասություններն արտահայտվում են նաեւ կոնկրետ անձանց նկատմամբ կիրառվող մուտքի սահմանափակումներով: Մի կողմից՝ Ռուսաստանը, մեր տեղեկություններով, արգելքներ է կիրառում Հռոմի ստատուտի շուրջ կոշտ դիրքորոշում արտահայտած հայաստանցի գործիչների նկատմամբ, մյուս կողմից՝Հայաստանը եւս անցանկալի անձանց շարքում է ներառել ռուսաստանցի որոշ ներկայացուցիչների:

Իսկ ո՞րն է այս ամենի քաղաքական նպատակը: Արդյո՞ք խոսքը դիվանագիտական ազդակների, փոխադարձ ճնշումների, թե՛ երկու երկրների միջեւ խորացող անվստահության մասին է:

Լուսինե Բադալյանի դեպքը եւս մեկ անգամ օրակարգ է բերում հարցը՝որքանո՞վ են հայ-ռուսական հարաբերություններում քաղաքական տարաձայնություններն ազդում պաշտոնյաների եւ պատգամավորների ազատ տեղաշարժի վրա: Եվ արդյոք հայկական կողմը պատրաստվում է պաշտոնական պարզաբանում պահանջել Մոսկվայից՝ հասկանալու համար, թե ինչ հիմքով է Հայաստանի իշխող ուժի ներկայացուցչի մուտքը Ռուսաստան արգելվել:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՆԱՀԱՏԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կառավարությունում հյուրընկալել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշին, ով Հայաստան է ժամանել Երեւանում անցկացվելիք Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP17) շրջանակներում առաջնորդների գագաթնաժողովին մասնակցելու նպատակով:

Վարչապետը ողջունել է Անտոնիու Գուտերեշի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան եւ նշել, որ նա երկրորդ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն է, որ այցելում է մեր երկիր: Նիկոլ Փաշինյանը կարեւորել է վերջին 8 տարիներին համատեղ աշխատանքը եւ նշել, որ այդ ընթացքում շատ բաներ են տեղի ունեցել տարածաշրջանում եւ աշխարհում:

Երկրի ղեկավարը հիշեցրել է, որ ՄԱԿ-ի դերի մասին թեման բոլոր տեսակի քննարկումների կենտրոնում է եղել, միջազգային ասպարեզում անընդհատ քննարկվել է բազմակողմանիության կարեւորությունը: «Թվում է, թե շատ միջազգային խաղացողներ շատ են ցանկանում տեսնել այդ բազմակողմանիությունը՝ լավ հասկանալով ՄԱԿ-ի դերը: Բայց ցավոք, շատ տեղերում մենք տեսնում ենք միակողմանիություն, եւ աշխարհում իրավիճակը գնալով բարդանում է:

Բայց բարեբախտաբար, մեր տարածաշրջանում, շատ դժվար իրադարձությունների միջով անցնելուց հետո, մենք ի վիճակի ենք եղել փոխել իրավիճակը, եւ հիմա մեր գլխավոր նպատակն է հասնել վերջնական կետին: Ես նկատի ունեմ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագրի ստորագրումն ու վավերացումը: Այն մեր հիմնական նպատակն է, եւ մենք պետք է կենտրոնանանք դրա վրա, որովհետեւ դա իրականացնելը հեշտ չէ, բայց մյուս կողմից մենք պետք է լինենք հնարավորինս կենտրոնացած այդ նպատակի վրա»,- ասել է Նիկոլ Փաշինյանը: Անդրադառնալով COP-17-ին՝վարչապետը նշել է, որ այն ամենամեծ միջոցառումն է, որ երբեւէ կազմակերպվել է Հայաստանի Հանրապետությունում եւ վստահություն հայտնել, որ այն կանցնի բարձր մակարդակով:

Իր հերթին Անտոնիու Գուտերեշը շնորհակալություն է հայտնել ջերմ հյուրընկալության եւ COP 17 համաժողովի լավագույնս կազմակերպման համար: «Ցանկանում եմ շնորհավորել Հայաստանին, որովհետեւ այս համաժողովը չափազանց լավ է կազմակերպվել: Իմ գործընկերները պատմում են, որ բանակցություններում համատեղ հայտարարության կամ համաձայնության հասնելը միշտ դժվար է: Հայաստանը ցուցաբերել է արտակարգ դիվանագիտական կարողություն՝ գործելով հրաշքներ, միավորելով տարբեր կարծիքներ եւ տեսակետեր: Այն բոլոր ոլորտներում, որտեղ COP-ը աշխատում է՝ կենսաբազմազանություն, կլիմա, իսկապես հայկական ղեկավարության ու դիվանագիտության որակը աչքի է ընկնում»,- ասել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը եւ կարեւորել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատումը եւ այդ գործում ընդգծել վարչապետ Փաշինյանի անձնական ներդրումը:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները մտքեր են փոխանակել COP 17 համաժողովի անցկացման, տեղի ունենալիք քննարկումների վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաեւ տարածաշրջանային գործընթացներին, այդ թվում՝ TRIPP նախագծի իրականացման ընթացքին: Երկուստեք ընդգծվել է վերոնշյալ նախագծի կարեւորությունը՝ տարածաշրջանային հաղորդուղիների ապաշրջափակման եւ փոխգործակցության խթանման գործում:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է

ԻՆՉՊԵՍ Է ՀԱՓՇՏԱԿԵԼ ՊՈՒՐԱԿԻ ՍԱԼԻԿՆԵՐԸ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ վերջերս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հանրային հրեական հեռատեսությամբ է հարուցվել Գավառի մանկական նախկին տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար եւ ներկայումս ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության Գավառի տարածքային կենտրոնի ղեկավար Նաիրա Խանդանյանի ամուսնու՝ Սուրեն Կնյազյանի նկատմամբ:





Մանսավորապես՝ Գավառի մանկատան լուծարումից հետո շենքն իր գույքով հանձնվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող «Օթեւան» ՊՈԱԿ-ի Գավառի տարածքային կենտրոնին, որի պարետ էր նշանակվել Սուրեն Կնյազյանը: Սուրեն Կնյազյանը պատասխանատու լինելով գույքի նկատմամբ 2026թ. ընթացքում յուրացրել է իրեն վստահված գույքը՝ հափշտակել է նախկին մանկատան խաղահրապարակի սալաքարերը, որը մանկատան տարածքից գաղտնի տեղափոխել եւ տեղավորել է իր բնակության հասցեում: Հատկանշական է, որ Սուրեն Կնյազյանը հիշյալ հասցեում բնակվում է Նաիրա Խանդանյանի հետ միասին, որը ժամանակին լինելով մանկատան տնօրեն չէր կարող չճանաչել մանկատան գույքը: Նշվածից կարելի է ենթադրել, որ տիկինը առնվազն քողարկել է ամուսնու կողմից կատարված հանցանքը: Հարկ է նշել, որ հիշյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է համապատասխան դատախազին՝ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Բացի այդ, ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ Սուրեն Կնյազյանի վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում առկա է եւս մեկ քրեական վարույթ, որը վերաբերում է մանկատան գույք հանդիսացող երկաթյա դարպասների փոխարինմանը: Ըստ տեղեկությունների՝ 2022թ. ընթացքում այդ ժամանակ մանկատան տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նաիրա Խանդանյանի կազմակերպմամբ Սուրեն Կնյազյանը, ով այդ ժամանակ մանկատանը գրանցված է եղել որպես վարորդ, պայմանագիր է կնքել բարեգործական կազմակերպության հետ, որը հանձն է առել փոխարինել մանկատան հին դարպասները՝նորով: Ըստ տեղեկությունների՝ հիշյալ կազմակերպությունը Սուրեն Կնյազյանին է փոխանցել մոտ 1500000 ՀՀ դրամ գումար, որի դիմաց վերջինս պետք է կազմակերպեր դարպասների փոխարինումը, սակայն, բացի այն, որ Սուրեն Կնյազյանը հին դարպասները կրկին յուրացրել է, այլ նաեւ փոխարենը տեղադրել է անորակ եւ իրեն փոխանցված գումարից անհամեմատ էժան դարպասներ՝ հափշտակելով մնացած գումարը:

Ուշագրավն այն է, որ Նաիրա Խանդանյանը՝ Գավառի մանկատան տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, այնուհետեւ՝ Սոցիալական ապահովության պետական ծառայության Գավառի տարածքային կենտրոնի ղեկավար, իսկ Սուրեն Կնյազյանը՝ «Օթեւան» ՊՈԱԿ-ի Գավառի տարածքային կենտրոնի պարետ, ըստ լուրերի, նշանակվել են ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Գրիգորյանի ջանքերով, ով ըստ լուրերի, ամեն ինչ անում է, որպեսզի վերջիններս որեւէ խնդիր չունենան իրավապահ համակարգի հետ:

ArmLur.am-ը դիմեց Հակակոռուպցիոն կոմիտե՝ հասկանալու համար, թե որքանով են տեղեկությունները համապատասխանում իրականությանը: Ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնեցին. «Օթեւան» ՊՈԱԿ-ի պարետի պաշտոնը զբաղեցրած անձը, օգտագործելով ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունը, հափշտակել է փաստացի իրեն վստահված, նույն ՊՈԱԿ-ին կից պուրակի սալիկները՝այդ կերպ յուրացնելով փաստացի իրեն վստահված գույքը: Հակակոռուպցիոն կոմիտեում Ս. Կնյազյանին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նրա վերաբերյալ նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան»:

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ





«Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ, բարերար Սամվել Կարապետյանը հայց է ներկայացրել ընդդեմ հասարակական-քաղաքական գործիչ Արկադի Վարդանյանի՝ պահանջելով ներողություն խնդրել իրենից, գրում է pastinfo.am-ը: Հայցի համար հիմք է հանդիսացել սեպտեմբերի 12-ին «Նոյան Տապան»-ի եթերում հրապարակված Արկադի Վարդանյանի հարցազրույցը, որտեղ, Կարապետյանի դիտարկմամբ, վիրավորանք է հնչեցվել իր հասցեին: Սամվել Կարապետյանը դատական կարգով խնդրում է պարտավորեցնել Արկադի Վարդանյանին՝ ներողություն խնդրել իրենից հետեւյալ բովանդակությամբ. «Ես՝Արկադի Արշավիրի Վարդանյանս, ներողություն եմ խնդրում Սամվել Սարգսի Կարապետյանից այն բանի համար, որ 12.09.2026 թվականին YouTube սոցիալական կայքի «Noyan Tapan TV» ալիքում հրապարակվող «Քննարկում» հաղորդման ընթացքում հրապարակային եղանակով Սամվել Կարապետյանի հասցեին հնչեցրել եմ հետեւյալ վիրավորական արտահայտությունները. «Անտերը դու ես, որ անտերի նման եկել ես քո հայրենիքը եւ անտեր շան նման էստեղ-էնտեղ հաչում ես ռուսների օգտին, այ անտեր շուն, իսկական անտեր շուն ես, անտեր չի կարելի լինել»:

Բացի այդ՝ Կարապետյանը պահանջում է Արկադի Վարդանյանից հօգուտ իրեն բռնագանձել 1 մլն դրամ՝ որպես վիրավորանքի համար փոխհատուցում, ինչպես նաեւ դատական ծախսի գումարը՝ կազմված պետական տուրքի եւ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարներից: Հայցը մակագրվել է Երեւանի քաղաքացիական դատարանի դատավոր Մարիաննա Ստեփանյանին:

ԼՈՒՐԵՐ

Ի՞ՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

Հանրային մեղադրողը պահանջում է Գեւորգ Ներսիսյանին դատապարտել 3 տարի 6 ամիս, իսկ Համբարձում Ներսիսյանին՝ 7 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման, գրում է Լուրեր.com-ը:

Գեւորգ Ներսիսյանը Ամենայն հայոց կաթողիկոսի եղբայրն է, իսկ Համբարձում Ներսիսյանը՝ եղբորորդին: Վերջինիս դեպքում պահանջվող պատժաչափին առաջարկվում է գումարել նաեւ մեկ այլ քրեական գործով պայմանականորեն չկիրառված պատիժը:

Հաջորդ դատական նիստը նշանակված է հոկտեմբերի 22-ին՝ ժամը 15:00-ին: Նիստի ընթացքում դատարանը կլսի նաեւ պաշտպանական կողմի դիրքորոշումը, որից հետո կհեռանա խորհրդակցական սենյակ:

Ավելի վաղ, դատավոր Գեւորգ Մանուկյանի նախագահությամբ, Գեւորգ եւ Համբարձում Ներսիսյանների նկատմամբ մեղադրական վերդիկտ էր կայացվել:

ՊԵՏՇԱՀԵՐԻ ՀԱՅՑ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Տավուշի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում իրականացված ուսումնասիրությամբ պարզել է, որ Իջեւան համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Իջեւանի քաղաքային զբոսայգում գտնվող 120.8 քմ մակերեսով Քանդակագործների տնակը, օրենսդրության պահանջների խախտմամբ, համայնքի կազմում գտնվող փակ բաժնետիրական ընկերության պարտավորությունների դիմաց ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից 2003 թվականի նոյեմբերի 18-ին ներկայացվել է աճուրդի եւ օտարվել:

Տավուշի մարզի դատախազությունը 2026 թվականի սեպտեմբերի 23-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ հարկադիր աճուրդն անվավեր ճանաչելու եւ հետեւանքները վերացնելու պահանջով:

Վարչական դատարանի՝ 2026 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ՝ Դատախազության հայցադիմումն ընդունվել է վարույթ:

105 ՓԱԹԵԹ

Համայնքային ոստիկանության Հրազդանի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Մեղրաձոր գյուղի 63-ամյա մի բնակիչ աճեցնում է կանեփ, այն չորացնում տանիքում, նաեւ օգտագործում է թմրանյութ:

Կոտայքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվեց քրեական վարույթ եւ դատարանի որոշմամբ տղամարդու տանը կատարվեց խուզարկություն: Հայտնաբերվեց կանեփանման զանգվածով լցված 105 փաթեթ, որոնց ընդհանուր քաշը երեք կիլոգրամ էր: Ավելին, հայտնաբերվեց նաեւ ինքնաշեն երկու ատրճանակ, ականանետի արկ, ինքնաձիգի երկու պահեստատուփ եւ փամփուշտ:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Հոկտեմբերի 5-ից 12-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են վարելու ընթացքում ծխելու 581 դեպք:*

ՄԱՐՔ

80 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ

Սեպտեմբերի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե Տավուշում փայտածուխի քանի արտադրամաս է գործում: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «ՀՀ Տավուշի մարզում փայտածուխի արտադրամասերի թվի վերաբերյալ առաջարկում ենք դիմել ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնին»: Տավուշի մարզպետի աշխատակազմում գործում է գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչություն: Այդ վարչությունը ինչպե՞ս կարող է իրականացնել շրջակա միջավայրի պահպանության գործառույթ, եթե տեղյակ չէ, թե Տավուշի մարզում շրջակա միջավայրն աղտոտող փայտածուխի քանի արտադրամաս է գործում: Տավուշում փայտածուխիի արտադրամասերի մեծ մասը մետաղյա կիսված մեծ տակառ է, որտեղ վառելափայտը մարմանդ ծխեցնում, ածուխ են ստանում: Այդ արտադրամասերը խախտում են բնապահպանական չափանիշները, աղտոտում մթնոլորտը, շրջակա միջավայրը: Տավուշի մարզի անտառներում ապօրինաբար հատված վառելափայտի մեծ մասը իրացվում է մարզի փայտածուխի արտադրամասերում:

Հոկտեմբերի 5-ին Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանին հարցում եմ արել. «Տավուշի մարզում օրինական հիմունքներով փայտածուխի քանի՞ արտադրամաս է գործում, մարզի ո՞ր համայնքում՝ քանի՞ հատ: Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը 2025 եւ 2026 թվականներին դրանցից քանիսի՞ գործունեության ուսումնասիրության է կատարել, քանիսի՞ գործունեությունն է համապատասխանել բնապահպանական սահմանված չափանիշներին»: Տեսչական մարմնից հայտնել են. «Տավուշի մարզում ներկայումս հաշվառված է փայտածուխի արտադրության 80 արտադրամաս (անհատ ձեռնարկատերեր եւ ֆիզիկական անձինք): 2025-2026 թվականների ընթացքում իրականացված 3 ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումներով կիրառվել են վարչական պատասխանատվության միջոցներ, որից 2-ով՝ հողերի ոչ նպատակային օգտագործման հիմքով, վարույթի նյութերն ուղարկվել են համապատասխան համայնքապետարաններ, քանի որ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի՝վարչական տույժի քննությունն իրականացնում է տարածքային կառավարման մարմինները: ՀՀ ՆԳՆ ոստիկանության հետ համատեղ արտադրամասերում պարբերաբար իրականացվել են ստուգայցեր, որոնց արդյունքում նույնպես կիրառվել են վարչական տույժեր: Բացի այդ, փայտանյութի ապօրինի ձեռքբերման հանգամանքները պարզելու նպատակով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել են քրեական վարույթներ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ փայտածուխի արտադրության 80 արտադրամասի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է նաեւ Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու նպատակով»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԷԲՈԼԱ ՎԻՐՈՒՍ

«ԶՎԱՐԹՆՈՑ»-ՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ Է

«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի պետական սահմանի անցման կետում Հայաստանի Հանրապետության առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը ժամանակավորապես վերահսկողություն կիրականացնի, որ բունդիբուգյո վիրուսը (էբոլա) Հայաստան չներթափանցի:



Նման որոշում կայացվել է կառավարության այսօրվա նիստում:

«2026 թվականի հոկտեմբերի 19-ից 30-ը Երեւանում անցկացվելու է Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17), իսկ հոկտեմբերի 16-ին՝ COP17-ին նախորդող Կենսաբազմազանության առաջնորդների գագաթնաժողովը (Leaders' Summit on Biodiversity): Միջոցառման մասնակիցների ժամանումները նախատեսվում են նաեւ համաճարակաբանական ռիսկի տեսանկյունից ուշադրություն պահանջող պետություններից եւ տարածքներից:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից 2026 թվականի օգոստոսի 24-ին հրապարակվել են «Public health emergency of international concern (PHEIC). Epidemic of Ebola Bundibugyo virus disease in the Democratic Republic of the Congo (DRC). Temporary recommendations» ժամանակավոր առաջարկությունները՝ Բունդիբուգյո վիրուսային հիվանդության (Bundibugyo virus disease, BVD) համաճարակի վերաբերյալ: Նշված փաստաթղթի համաձայն՝ 2026 թվականի օգոստոսի 14-ի դրությամբ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում համայնքային փոխանցման ռիսկը գնահատվել է «շատ բարձր» (Very high), եւ այդ պահին համայնքային փոխանցում ունեցող պետությունների խմբում ընդգրկված է եղել միայն Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը: Միաժամանակ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության հետ ցամաքային սահման ունեցող Անգոլայի, Բուրունդիի, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության, Կոնգոյի Հանրապետության, Ռուանդայի, Հարավային Սուդանի, Տանզանիայի, Ուգանդայի եւ Զամբիայի համար տարածաշրջանային ռիսկը գնահատվել է «բարձր» (High), իսկ մյուս պետությունների համար՝ «ցածր» (Low):

ԱՀԿ-ի ժամանակավոր առաջարկություններում բոլոր մյուս պետություններին առաջարկվում է ապահովել համայնքային փոխանցում ունեցող տարածքներից ժամանող՝ անհայտ ծագման տենդային հիվանդության կասկածելի դեպքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման, գնահատման, հաղորդման եւ վարման մեխանիզմներ, պետական սահմանի անցման կետերում նման տարածքներից ժամանող անձանց տրամադրել տեղեկություն՝ ժամանումից հետո 21 օրվա ընթացքում BVD-ին համապատասխան ախտանշաններ ի հայտ գալու դեպքում ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ, ինչպես նաեւ փոխադրողների հետ համագործակցությամբ ապահովել կասկածելի դեպքերի եւ կոնտակտավորների նույնականացումը: Միաժամանակ ԱՀԿ-ն չի առաջարկում համայնքային փոխանցում ունեցող պետություններից չվերթների կասեցում կամ այդ պետություններից ժամանող անձանց մուտքի արգելու:

Առկա համաճարակաբանական տվյալների համաձայն՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում շարունակում է պահպանվել անբարենպաստ համաճարակաբանական իրավիճակ. արձանագրվել է հիվանդության 5,290 հաստատված դեպք, այդ թվում՝ 2,516 մահվան դեպք: Միաժամանակ, տարածաշրջանի առանձին երկրներում նույնպես արձանագրվել են հիվանդության դեպքեր. մասնավորապես, Ուգանդայում միայն հիվանդության վերջին դեպքի արձանագրումից հետո 42-օրյա ժամանակահատվածի ավարտին է հայտարարվել Էբոլայի վիրուսային հիվանդության բռնկման ավարտի մասին: Նշված հանգամանքները վկայում են տարածաշրջանում համաճարակաբանական ռիսկի պահպանման եւ հիվանդության միջազգային տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին:

ԱՀԿ նշված առաջարկությունների եւ ընթացիկ համաճարակաբանական տեղեկատվության համակցված գնահատումը հիմնավորում է ոչ թե համընդհանուր սահմանափակման, այլ ժամանակավոր, նպատակային եւ ռիսկի վրա հիմնված սանիտարակարանտինային վերահսկողության կիրառումը: Հաշվի առնելով, որ COP17-ի շրջանակում Հայաստանի Հանրապետություն նախատեսվում են ժամանումներ նաեւ այն պետություններից եւ տարածքներից, որոնք Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից՝ ԱՀԿ-ի տվյալների եւ ընթացիկ համաճարակաբանական իրավիճակի հիման վրա կներառվեն համապատասխան ռիսկային ցանկում, առաջանում է այդ անձանց նկատմամբ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի պետական սահմանի անցման կետում նպատակային վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտություն:

Նպատակային սանիտարակարանտինային վերահսկողության շրջանակում առաջնային միջոցառումը համապատասխան անձանց մարմնի ջերմաստիճանի ոչ կոնտակտային չափումն է, իսկ հիվանդության կասկածի կամ համապատասխան ախտանշանների հայտնաբերման դեպքում հետագա միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ սահմանված կարգով

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է մինչեւ հոկտեմբերի 26-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը ժամանակավորապես տեղակայել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի պետական սահմանի անցման կետում՝ այն ժամանակահատվածներում, որոնցով COP17-ի շրջանակում Հայաստանի Հանրապետություն են ժամանում առողջապահության նախարարության կողմից տրամադրված ցանկում ընդգրկված պետություններից կամ տարածքներից անձինք:

Նախագծի ընդունմամբ կապահովվի COP17-ի շրջանակում Հայաստանի Հանրապետություն ժամանող անձանց հետ կապված՝ BVD-ի ներբերման եւ տարածման համաճարակաբանական ռիսկերի նկատմամբ ժամանակին եւ նպատակային արձագանքումը, հնարավոր դեպքերի վաղ հայտնաբերումը, անհրաժեշտության դեպքում կոնտակտների արագ հետագծումը եւ հանրային առողջության պաշտպանության միջոցառումների օպերատիվ իրականացումը:

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Ստամբուլում տեղացած ուժեղ անձրեւները հեղեղել են բնակելի եւ գրասենյակային շենքերը՝ ճանապարհներին եւ ստորգետնյա անցումներում հսկայական ջրափոսեր առաջացնելով:

Չորեքշաբթի Ստամբուլը ցնցվեց ուժեղ տեղատարափ անձրեւից: Տեղական լրատվամիջոցները հաղորդում են, որ դա 1985 թվականից ի վեր ամենաուժեղ անձրեւներից մեկն էր: Ստամբուլի ասիական կողմի Բեյքոզ շրջանում տեղումների քանակը կազմել է 255.8 միլիմետր: Փողոցները հեղեղվել են: Ստամբուլի արտակարգ իրավիճակների կառավարման վարչության տվյալներով՝ քաղաքի եվրոպական կողմում գտնվող Էյուփսուլթան շրջանում գրանցվել է 195.9 միլիմետր տեղում, իսկ Սարըյերում՝ 195.6 միլիմետր: Մյուս շրջաններում տեղումների քանակը տատանվել է 35-ից մինչեւ 110 միլիմետր: Անձրեւը ողողել է բնակելի եւ գրասենյակային շենքերը: Ճանապարհներին եւ ստորգետնյա անցումներում հսկայական ջրափոսեր են առաջացել: Հրշեջներին հաջողվել է փրկել նկուղում մնացած տղամարդուն տեղատարափ անձրեւի ժամանակ: Անցորդները նույնպես ցուցաբերել են հմտություն եւ քաջություն՝ կարողանալով դուրս քաշել փողոցով հոսող ջրի հեղեղի մեջ մնացած կնոջը:

Այազագա (Սարյեր) շրջանում 34-ամյա Ս.Յ.-ն փորձել է տան դիմացով անցնել ճանապարհը: Ջրի առվի միջով անցնելիս նա սայթաքել է եւ գլուխը հարվածել մայթեզրին: Ս.Յ.-ն չի կարողացել դուրս գալ ճանապարհին առաջացած խորը ջրափոսից, անցորդները նրան օգնության են հասել: Նրան տեղափոխել են հիվանդանոց, սակայն չնայած բժիշկների բոլոր ջանքերին՝նրան փրկել չի հաջողվել: Դեպքի առթիվ հետաքննություն է սկսվել:

Ֆաթիհի Բալաթ շրջանի Չուկուրբոստան այգում 14-ամյա տղան հոսանքահարվել է՝ ջրափոսի մեջ ոտք դնելուց հետո: Նրան անգիտակից վիճակում տեղափոխել են հիվանդանոց: Վերակենդանացման ջանքերին հակառակ՝ նա մահացել է:

Ստամբուլի նահանգապետարանը հայտնել է, որ միջադեպի վերաբերյալ հետաքննություն է սկսվել:

● *Մարզերում հոկտեմբերի 5-ից 12-ը պարեկները հայտնաբերել են վարելու ընթացքում ծխելու 797 դեպք:*

ZEYRO-Ն ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է

ՊԱՏՐԱՍՏՎԵ՛Ք ՆՈՐԻՆ



Երկարատեւ լռությունից, օր ու գիշեր տեւած քրտնաջան աշխատանքից եւ մեր տեխնոլոգիական հսկա թիմի ներդրած անդադար ջանքերից հետո Zeyro-ն հայտարարում է իր մեծ վերադարձի մասին: Zeyro-ն հատուկ ուշադրություն է դարձրել վարորդների համայնքին. համալրված ու կատարելագործված ալգորիթմների շնորհիվ վարորդներն այլեւս չեն բախվի համակարգային խափանումների կամ անհասկանալի խնդիրների: Ամեն ինչ նախագծված է այնպես, որ աշխատանքը լինի առավելագույնս անխափան, պարզ, շահավետ եւ հարգալից՝ յուրաքանչյուր վարորդի ժամանակն ու աշխատանքը գնահատող:

Ուրախ ենք տեղեկացնել, որ Zeyro-ն թարմացրել է հավելվածի դիզայնը՝ ապահովելով ամբողջովին նոր, ավելի հարմարավետ ու ժամանակակից տեսք: Ներդրվել է նոր քարտեզ, որի շնորհիվ տեղորոշումն ու երթուղիների կառուցումն այսուհետ էլ ավելի ճշգրիտ են ու արագ: Բարելավվել է պատվերների բաշխման մեխանիզմը, իսկ ուղեւորության ընթացքում ավելացել է դինամիկ փոփոխությունների հնարավորություն, ինչը թույլ է տալիս ավելացնել նոր կանգառներ կամ փոփոխել առկաները: Առավել պարզ ու անխափան է դարձել վարորդ-պատվիրատու կապը, իսկ վարորդների համայնքի համար հասանելի է հատուկ մշակված նոր iOS հավելվածը: Վերջապես, ընդլայնվել են նաեւ հաշվետվություններն ու ցուցանիշները. վարորդի անձնական էջում ավելացել են հավելյալ վերլուծական տվյալներ, իսկ ֆրանչայզինգի համար կատարվել են համակարգային կարեւոր փոփոխություններ:

Zeyro-ն պարզապես հավելված կամ ծառայություն չէ. այն լիարժեք հայկական ծրագիր է՝ ստեղծված Հայաստանում մեր տաղանդավոր մասնագետների կողմից՝ սեփական սերվերային ենթակառուցվածքներով: Սա նշանակում է ամենաբարձր մակարդակի հուսալիություն եւ ինքնիշխանություն. Zeyro-ն կախված չէ դրսի ոչ մի ալգորիթմից կամ արտաքին գործոնից:

Առաջիկայում Zeyro-ն շատ անակնկալներ է բացահայտելու, որոնց մասին կտեղեկանաք շատ շուտով: Բայց քանի որ ուղեւորափոխադրման պահանջարկը առաջնահերթ է, նախընտրեցինք չսպասել եւ անհապաղ ազդարարել մեր ուղեւորափոխադրումների թարմացված մեկնարկը:

Մենք չենք արել պարզապես թարմացում. վերակառուցել ենք համակարգը հիմքից: Zeyro-ի մասնագետներն ամիսներ շարունակ աշխատել են օր ու գիշեր, որպեսզի այսօր ունենանք միջազգային չափանիշներին համապատասխանող, բացառապես տեղական ու հուսալի տեխնոլոգիա:

Zeyro-ի թիմն ասում է՝ խնդիրներն անցյալում են: Այսօր Zeyro-ն ներկայանում է նոր ոճով, կատարյալ որակով, հզոր ֆունկցիաներով ու առանց սահմանափակումների՝ ակնկալելով գործընկեր վարորդների եւ հավատարիմ ուղեւորների ակտիվ ներգրավվածությունը:

Սիրով՝ Zeyro թիմ (Գ)

ԱՎԵԼԻ ՔԱՆ 2 ՄԼՐԴ ԴՐԱՄ

ԿԱՊԱՀՈՎՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Կառավարության որոշմամբ առաջարկվում է 2026թ. բյուջեից ՀՀ մարզպետեների աշխատակազմերին հատկացնել 2,070,670.9 հազար դրամ՝ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար համապատասխան շինարարական կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական պարտավորություններ կատարելու համար, հայտնում է shantnews.am-ը:



Ինչպես նշել է ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը, նախատեսվում է համաֆինանսավորել 15 համայնքի 26 սուբվենցիոն ծրագիր: Ֆինանսավորումը նախատեսված է Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում՝ 2-ական, Արարատի ու Լոռու մարզերում՝ 6-ական, Կոտայքի մարզում՝ 4 ծրագրի համար: Դավիթ Խուդաթյանը տեղեկացրել է. «Այս որոշման հաստատմամբ արդեն 2026 թվականի պետական բյուջեից կունենանք 15 միլիարդ 236 միլիոն դրամի համաֆինանսավորված սուբվենցիոն ծրագրեր»:

Վարչապետը ներկայացրել է համաֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրերը: Այսպիսով՝ գումար կհատկացվի հետեւյալ աշխատանքների համար.

Արագածոտնի մարզի՝ Թալին համայնքի Կարմրաշեն, Ոսկեթաս եւ Ջովասար բնակավայրերում խմելու ջրագծերի հիմնանորոգում (ավարտված է, հիմնանորոգվել է 11,8 կմ երկարությամբ ջրագիծ, շահառուները՝ 361 տնային տնտեսություն), Ագարակավան բնակավայրում խմելու ջրագծի կառուցում (կատարված շինարարական աշխատանքները՝ 60%, կառուցվել է 10 կմ երկարությամբ ջրագիծ, շահառուները՝ 230 տնային տնտեսություն),

Արարատի մարզի՝ Արարատ համայնքի Նոյակերտ, Արարատ քաղաքային եւ Արարատ գյուղական բնակավայրերի ճանապարհների վերանորոգում ասֆալտապատմամբ (2-րդ փուլ, կատարված շինարարական աշխատանքները՝ 90%, ասֆալտապատվել է 4,6 կմ երկարությամբ ճանապարհի), Արարատ քաղաքային բնակավայրի մշակույթի տան վերանորոգում եւ հարակից այգու բարեկարգում (2-րդ փուլ, ավարտված է, բարեկարգվել է 670 քմ տարածք), Արմաշ, Երասխ, Պ. Սեւակ բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի եւ Ուրցալանջ բնակավայրի ջրամատակարարման համակարգի ՕԿՋ-ի կառուցման, ինչպես նաեւ Արարատ եւ Պ. Սեւակ բնակավայրերի ջրահեռացման համակարգերի կառուցում եւ Արարատ բնակավայրի ջրահեռացման կոլեկտորի վերակառուցում (կատարված շինարարական աշխատանքները՝ 80%, կառուցվել է 5 կմ ջրամատակարարման /ջրահեռացման համակարգ, շահառուները՝ 2128 տնային տնտեսություն), Ուրցալանջ, Վարդաշատ, Պ. Սեւակ եւ Զանգակատուն բնակավայրերի փողոցների հիմնանորոգում ասֆալտապատմամբ (կատարված շինարարական աշխատանքները՝ 95%, ասֆալտապատվել է 1,3 կմ երկարությամբ ճանապարհի), Արտաշատ համայնքի Ջրաշեն բնակավայրի փողոցների նորոգում ասֆալտապատմամբ (ավարտական փուլ, ասֆալտապատվել է 928 մ երկարությամբ ճանապարհի), Բուրաստան բնակավայրում մանկապարտեզի կառուցում (կատարված շինարարական աշխատանքները՝ 80%, նախադպրոցական հաստատությունը նախատեսված է 150 սանի համար),

Արմավիրի մարզի՝ Արմավիր համայնքի Արմավիր բնակավայրի թիվ 6 մսուր-մանկապարտեզ, (կատարված շինարարական աշխատանքները՝ 60%, նախադպրոցական հաստատությունը նախատեսված է 150 սանի համար), Հացիկ բնակավայրում մանկապարտեզի նոր շենքի կառուցում (կատարված շինարարական աշխատանքները՝ 60%, նախադպրոցական հաստատությունը նախատեսված է 110 սանի համար),

Գեղարքունիքի մարզի՝ Սեւան համայնքի Սեւան բնակավայրի Բարեկամության, Խաղաղության, Կոմիտասի, Աշոտ Երկաթի, Ելենովկա եւ Բաբաջանյան փողոցների հիմնանորոգման աշխատանքներ (կատարված շինարարական աշխատանքները՝ 95%, ասֆալտապատվել է 2.6 կմ երկարությամբ ճանապարհի), Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի լուսավորության համակարգի կառուցում (կատարված շինարարական աշխատանքները՝ 90%, կառուցվել է 3,5 կմ երկարությամբ լուսավորության համակարգ),

Լոռու մարզի՝ Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի թիվ 4 տնակային մանկապարտեզի շենքի կառուցում-2-րդ փուլ (ավարտված է, նախադպրոցական հաստատությունը նախատեսված է 70 սանի համար), Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ, Պուշկինո, Վարդաբլուր, Ամրակից եւ Կուրթան բնակավայրերի փողոցների տուֆով սալարկում (ավարտված է, սալարկվել է ընդհանուր 2,6 կմ երկարությամբ ճանապարհի), Գյուլագարակ բնակավայրում փողոցների տուֆով սալարկում (ավարտված է, սալարկվել է ընդհանուր 1 կմ երկարությամբ ճանապարհի), Փամբակ համայնքի Մարգահովիտ եւ Անտառամուտ բնակավայրերի փողոցների սալարկում տուֆով (ավարտական փուլ, սալարկվել է ընդհանուր 1,1 կմ երկարությամբ ճանապարհի), Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի 18-րդ փողոցի, Նոր Խաչակապ բնակավայրի 2-րդ փողոցի, Լուսաղբյուր բնակավայրի փողոցների, Գոգարան բնակավայրի 1-ին, 2-րդ եւ 3-րդ փողոցների, Գեղասար բնակավայրի 6-րդ փողոցի, Ջրաշեն բնակավայրի փողոցների սալարկում տուֆով (կատարված շինարարական աշխատանքները՝ 60%, սալարկվել է ընդհանուր 6,8 կմ երկարությամբ ճանապարհի), Նոր Խաչակապ բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում, Կաթնաջուր բնակավայրի խմելու ջրի ջրագծերի վերանորոգում (կատարված շինարարական աշխատանքները՝ 80%, կառուցվել եւ վերանորոգվել է ընդհանուր 7,5 կմ երկարությամբ ջրագիծ, շահառուները՝ 300 տնային տնտեսություն),

Կոտայքի մարզի՝ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրի «Արեւ» մանկապարտեզի վերանորոգում եւ բակային տարածքի բարեկարգում (կատարված շինարարական աշխատանքները՝ 65%, նախադպրոցական հաստատությունը նախատեսված է 120 սանի համար), Աբովյան քաղաքի 9-րդ փողոցի 1/5 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի վերակառուցում եւ գույքի ձեռքբերում (1-ին փուլ, ավարտված է, նախադպրոցական հաստատությունը նախատեսված է 288 սանի համար), Աբովյան համայնքի Բալահովիտ, Կաթնաղբյուր, Պտղնի բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի կառուցում (ավարտված է, կառուցվել է 1,8 կմ երկարությամբ լուսավորության համակարգ), Գառնի համայնքի Գառնի, Գեղադիր եւ Գողթ բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ (ավարտված է, ասֆալտապատվել է 1,2 կմ երկարությամբ ճանապարհի),

Սյունիքի մարզի՝ Կապան համայնքի Սեւաքար բնակավայրում հանդիսությունների սրահի շենքի նորոգում (ավարտված է, նորոգվել է 350 քմ տարածք), Կապան բնակավայրի Համլետավան թաղամաս տանող ճանապարհի ասֆալտապատում՝ Մ-2-ից դեպի թաղամաս տանող (ավարտված է, ասֆալտապատվել է 1,3 կմ երկարությամբ ճանապարհի),

Վայոց ձորի մարզի՝ Արենի համայնքի Արփի բնակավայրի ոռոգման ջրագծի կառուցում (ավարտված է, կառուցվել է 1 կմ երկարությամբ ոռոգման համակարգ, շահառուները՝ 120 տնային տնտեսություն, ոռոգվող հողատարածքները՝ 110 հա), Խաչիկ եւ Չիվա բնակավայրերում ոռոգման ներքին ցանցի կառուցում (ավարտված է, կառուցվել է 5 կմ երկարությամբ ոռոգման համակարգ, շահառուները՝ 160 տնային տնտեսություն, ոռոգվող հողատարածքները՝ 71 հա):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի գիտություն հասարակության

Հայտատու՝ «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամ»

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 02.12.2022 N 520-Ն որոշում

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամ»-ը մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամ»-ին պատկանող «151 կՎտ լողացող արեւային էլեկտրակայան»-ի արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնի սահման հայտով:

Առաջարկվող սակագին՝ 20,119 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

3:1 ՀԱՇՎԻՑ՝ 4:3

ՄԱԴՐԻԴՅԱՆ ԹԻՄԸ ՅՈՒՅԱԴՐԵՑ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՄՔ

Ֆուտբոլը գեղեցիկ է հենց այն պատճառով, որ մինչեւ եզրափակիչ սուլիչը ոչինչ որոշված չէ: «Ռեալ Մադրիդի» եւ «Ռոմայի» միջեւ դրամատիկ հանդիպումը դրա վառ օրինակն էր. մադրիդցիները, պարտվելով 1:3 հաշվով, կարողացան վերջին րոպեներին երեք գոլ խփել եւ հաղթանակ կորզել՝ 4:3 հաշվով:



Հոկտեմբերի 14-ին Հռոմի «Օլիմպիկո» մարզադաշտում Չեմպիոնների լիգայի շրջանակներում Մադրիդի «Ռեալը» հյուրընկալվել էր «Ռոմային»:

Հանդիպումը մեկնարկեց բարձր տեմպով: «Ռոման» ակտիվ էր, վստահորեն կազմակերպում էր գրոհները եւ փորձում էր ճնշում գործադրել մրցակցի պաշտպանության վրա: 20-րդ րոպեին Մարտեն դե Ռոնը բացեց հաշիվը՝ առաջ մղելով հռոմեական թիմին:

25-րդ րոպեին Կիլիան Մբապեն հավասարեցրեց հաշիվը՝ վերադարձնելով մադրիդցիներին խաղի մեջ: Այդուհանդերձ, հավասար հաշիվը չխանգարեց «Ռոմային» շարունակել իր ակտիվ խաղը:

Երկրորդ խաղակեսի սկզբում «Ռոման» ավելի մեծ առավելություն ստացավ: Դոնիել Մալենը 51-րդ րոպեին առաջ մղեց իր թիմին, իսկ 57-րդ րոպեին կրկին գրավեց մրցակցի դարպասը՝ հաշիվը դարձնելով 3:1:

Իրավիճակը չափազանց բարդ էր «Ռեալի» համար: Թիմը դժվարանում էր վերահսկել մրցակցի արագ գրոհները, իսկ պաշտպանությունում թույլ տված սխալները ծանր էին նրանց համար: «-Ռոման» կարծես մոտ էր հաղթանակին, բայց թերեւս վաղ էր հավատացել, որ հանդիպումն արդեն ավարտված է: Խաղի վճռորոշ շրջադարձը տեղի ունեցավ հանդիպման վերջնամասում:

83-րդ րոպեին Կառլոս Էսպին կրճատեց հաշվի տարբերությունը՝ 3:2: Այս գոլը նոր շունչ հաղորդեց «Ռեալին» եւ փոխեց խաղի հոգեբանական մթնոլորտը: 2 րոպե անց՝ 85-րդ րոպեին, Էնդրիկը հավասարեցրեց հաշիվը՝ 3:3: Խաղի հիմնական ավարտին՝ 90-րդ րոպեին Անտոնիո Ռյուդիգերը խփեց հաղթական գոլը՝ հաշիվը դարձնելով 4:3: «Ռեալը» ոչ միայն փրկեց հանդիպումը, այլեւ վերջին ակնթարթներին ամբողջությամբ շրջեց դրա ընթացքը:

Փորձագետների գնահատմամբ՝ «Ռոմայի» գլխավոր խնդիրը խաղի վերջնամասում պաշտպանական կազմակերպվածության կորուստն էր: 3:1 հաշվի պայմաններում թիմը չկարողացավ պահպանել կենտրոնացվածությունը:

Այս հանդիպումը եւս մեկ անգամ ապացուցեց, որ միայն լավ խաղալը բավարար չէ. անհրաժեշտ է նաեւ ճիշտ կառավարել առավելությունը, պահպանել կարգապահությունը եւ դիմանալ մրցակցի ճնշմանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՎԻՆԻՍԻՈՒՍԸ ԽԱԽՏԵԼ Է ԼՌՈՒԹՅՈՒՆԸ

Չեմպիոնների լիգայի խաղարկությունում «Ռոմայի» նկատմամբ տարած դրամատիկ հաղթանակից (4:3) հետո Մադրիդի «Ռեալի» վինգեր Վինիսիուս Ժունիորը խախտել է լռությունը: Բրազիլացի ֆուտբոլիստն անկեղծ զրույց է ունեցել լրագրողների հետ՝ անդրադառնալով «Սանտյագո Բեռնաբեուի» տրիբունաներից իր հասցեին հնչած սուլոցներին, փոխարինման ժամանակ իր դրսեւորած զայրույթին, Լա լիգայում սպացած 4-խաղյա որակազրկմանը եւ մրցավարների կողմնակալ վերաբերմունքին, գրում է armsport-ը:

Վինիսիուսը հարգանքով է մոտեցել մադրիդյան տրիբունաների դժգոհությանը, սակայն հիշեցրել է ակումբում իր ունեցած կարգավիճակի եւ վաստակի մասին. «Սուլոցներն, իհարկե, չեն օգնում, բայց մարդիկ վճարում են իրենց տոմսերի համար: Մենք ավելի լավ ենք խաղում, երբ երկրպագուները մեզ աջակցում են. այդպես ավելի լավ է խաղում Ջուդ Բելինգհեմը, ավելի լավ է խաղում Մբապեն, ավելի լավ եմ խաղում նաեւ ես: Կարծում եմ՝ ինձ ամենահեշտն է քննադատության թիրախ դարձնելն ու սուլելը, քանի որ ես ամենաերկարն եմ այս թիմում եւ ավագներից մեկն եմ: Բայց ես դեռ ցույց կտամ ինձ: Երբ բոլորովին երիտասարդ տարիքում տեղափոխվեցի այստեղ, շատերն էին ծիծաղում ինձ վրա, իսկ արդյունքում ես արդեն 100-ից ավելի գոլ եմ խփել «Ռեալի» կազմում»:

Բրազիլացին չի թաքցրել, որ դժգոհ է իր ներկայիս մարզավիճակից, եւ բացատրել է, թե ինչու էր զայրացած փոխարինվելուց հետո. «Նորմալ է, որ փոխարինումից հետո բարկացած էի, քանի որ միշտ ցանկանում եմ լավ մարզավիճակում լինել եւ օգնել թիմին: Ես ինքս իմ վրա եմ զայրացած, որ այժմ իմ լավագույն տարբերակը չեմ: Այդուհանդերձ, փոփոխությունները վերափոխեցին թիմի խաղը. Էնդրիկը փոխեց խաղի դինամիկան եւ լավագույնն էր խաղադաշտում, իսկ Կառլոսը մտավ մի քանի րոպեով ու դարձավ գոլի հեղինակ: Ի վերջո, Վինին միշտ վերադառնում է, եւ ես կասկած չունեմ, որ կրկին կվերադառնամ իմ լավագույն մարզավիճակին»:

Անդրադառնալով Մրցումների անցկացման կոմիտեի կողմից իրեն տրված 4-խաղյա որակազրկմանը՝ Վինիսիուսը դժգոհություն է հայտնել ինչպես որոշման հրապարակման պահից, այնպես էլ կանոնակարգի անորոշությունից. «-Կարծում եմ՝ պատժի մասին որոշումը շատ անհարմար պահի հրապարակվեց: Նրանք ամբողջ օրն ունեին դրա համար, բայց ես որակազրկման մասին իմացա միայն մարզադաշտ ժամանելուն պես: Կանոնը նոր է. Լա լիգայի ներկայացուցիչները միշտ գալիս են՝ մեզ բացատրելու նորամուծությունները, բայց կոնկրետ այս կետը մեզ չէին պարզաբանել: Ես երբեք բռնի գործողություն թույլ չեմ տվել մեկ այլ ֆուտբոլիստի նկատմամբ: Ինձ բավականին շատ են հարվածում խաղադաշտում, բայց քարտերը միշտ ես եմ ստանում»:

Վինիսիուսը նաեւ տարակուսանք է հայտնել մրցավարների գործողությունների վերաբերյալ՝ կոչ անելով պաշտպանել տեխնիկապես օժտված ֆուտբոլիստներին. «Մրցակից թիմերի երկրպագուները պետք է սուլեն ինձ, քանի որ ես խաղադաշտում եմ՝ նրանց թիմերի դարպասը գրավելու համար: Բայց մրցավարներին ես պարզապես չեմ հասկանում: Վերջերս մի վիճակագրություն տեսա, ըստ որի՝ մրցակիցներն իմ դեմ 500 անգամ կանոնները խախտում են, որպեսզի ընդամենը 5 կարմիր քարտ ստանան, ու չգիտեմ՝ քանի դեղին, մինչդեռ դեղին քարտերը միշտ Վինիի համար են: Ես սա չեմ հասկանում: Մենք պետք է պաշտպանենք այն ֆուտբոլիստներին, ովքեր խաղադաշտում տարբերություն են ստեղծում, ինչպիսիք են, օրինակ, Լամին Յամալը՝ «-Բարսելոնայում», կամ Խուլիան Ալվարեսը՝ «Ատլետիկոյում»»:

ԿԻՍՎԵԼ Է

ՄԱՐԶԻՉԸ՝ ԽԱՂԻՑ ԱՌԱՋ

ՈՒԵՖԱ Եվրոպա լիգայի լիգայի փուլի շրջանակում կայանալիք «Յագելոնիա» - «Արարատ-Արմենիա» հանդիպմանն ընդառաջ լեհական ակումբի գլխավոր մարզիչ Ադրիան Սեմյենեցը կիսվել է սպասումներով եւ անդրադարձել թիմի ներկայիս ճգնաժամին:

Լեհ մասնագետը չի խուսափել սուր անկյուններից՝ խոստովանելով, որ թիմը պաշտպանությունում լուրջ խնդիրներ ունի: «Այսօր ես եւ թիմին, եւ ինձնից պահանջում եմ պատասխանատվություն կրել այն բանի համար, թե ինչպես ենք պաշտպանվում որպես մեկ ամբողջություն: Ցավոք, ներկայումս մենք լավ չենք պաշտպանվում որպես թիմ, եւ սա է այն գլխավոր հարցը, որի վրա պետք է կենտրոնանանք իրավիճակը շտկելու, հավասարակշռությունը վերականգնելու եւ վստահություն ձեռք բերելու համար: Մենք պետք է վերադառնանք հիմքերին: Մեր նախապատրաստական շրջանի հիմքը սեփական դարպասն անառիկ պահելն էր. թեեւ սկզբում շատ գոլային պահեր չէինք ստեղծում, բայց հիանալի էինք գործում պաշտպանությունում: Հիմա մեզ հարկավոր է ավելի մեծ կենտրոնացում, կարգապահություն, վճռականություն եւ ինտենսիվություն առանց գնդակի:

Երբ դու ունես անընդմեջ չորս պարտություն, մի՞թե պետք է խոսել ինչ-որ մեծ բաների՝ գեղեցիկ կոմբինացիաների, մեկ հպումով խաղի կամ տպավորիչ ֆուտբոլի մասին: Այդ ամենին հասնում են առանձին խաղերում վստահություն կառուցելու եւ կարգապահության վրա հիմնված հիմքեր ստեղծելու միջոցով: Հնարավոր չէ տունը տանիքից սկսել՝ այն կառուցվում է հիմքից: Մենք պարզապես պետք է սկսենք պարզ բաներից. արա ճիշտ փոխանցում, մտիր խաղի մեջ, պահպանիր մարտավարական դասավորությունը, պայքարիր քո գոտում: Այս պարզ քայլերը կվերադարձնեն մեր հավասարակշռությունն ու վստահությունը:

Որպես ակումբ՝ մենք պաշտոնական նամակ ենք հղել՝ խնդրելով պարզաբանել որոշ դրվագներում կայացված մրցավարական որոշումները: Չեմ ուզում շատ խորանալ անցյալում կամ հետ նայել «Լեգիայի» դեմ խաղին, բայց վերջին հանդիպման դրվագներն իմ սուբյեկտիվ գնահատականով սխալ են գնահատվել, ինչը մեծապես ազդել է խաղի սցենարի վրա: Սակայն սա չի նշանակում, թե ամեն ինչ իդեալական ենք արել: Բացի մրցավարական բացթողումներից, կա մեր խաղի որակը, որը շտկելու կարիք ունի. մենք վերջին խաղերում շատ ենք գոլեր ընդունում եւ շատ քիչ խփում: Մեր մասնագիտությունը ենթադրում է մշտական ճնշում ու տատանումներ, ուստի ես սովոր եմ դրան եւ դա ընդունում եմ որպես աշխատանքի բնականոն մաս: Իմ գլխում միայն մեկ բան է՝ ինչպես օգնել թիմին դուրս գալ այս իրավիճակից եւ սկսել նորմալ գործել: Հավատում եմ, որ վաղվա խաղում մենք կկատարենք առաջին քայլը՝ ավելի լավ տեսք ունենալու եւ դրական արդյունքներ գրանցելու համար»,- ըստ armsport-ի՝ «Յագելոնիայի» գլխավոր մարզչի խոսքն է մեջբերում ակումբի պաշտոնական կայքը:

Հիշեցնենք, որ հանդիպումը կայանալու էր հոկտեմբերի 15-ին՝ Երեւանի ժամանակով 23:00-ին:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հոկտեմբերի 25-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Թզուկի երգը» ներկայացումը:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ տվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ տեղափոխման համար:

Գագիկ Կարապետյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն 24.11.2010 թ. հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին (ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ «Դպրոց ընդունվելու հայտագրման համակարգի» միջոցով),

2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքը (ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով)՝ բացառությամբ պետական հաստատության 1-ին դասարան ընդունվելու դեպքի:

3) լուսանկար՝3x4 չափսի, «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում», սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,

4) տեղեկանք՝ տրված Միասնական սոցիալական ծառայություն տրամադրող կենտրոնի կողմից՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների վերաբերյալ՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության), եթե տեղեկատվական համակարգերի միջոցով հնարավոր չէ ինքնաշխատ եղանակով տվյալների փոխանակում,

5) ՄՈՒՀ-երից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,

6) սույն կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից,

7) այլ երկրում ուսումնառությունն ընդհատած եւ ՀՀ վերադարձած սովորողի դեպքում թղթային եղանակով ներկայացվում է նաեւ փաստաթուղթ՝ ուսումնական գործընթացին մասնակցության, առաջադիմության եւ բացակայությունների վերաբերյալ տվյալներով, ինչպես նաեւ (առկայության դեպքում, եթե ուսումը շարունակվում է կրթական 3-րդ աստիճանում) հիմնական կրթության վկայականը կամ տվյալ երկրում ստացված համարժեք փաստաթուղթը՝ թղթային եղանակով: Փաստաթղթերի բացակայության դեպքում դասարանի համապատասխանությունը որոշվում է սույն կարգի 22-րդ եւ 30-րդ կետերով սահմանված կարգով:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս են կարգավորվում մարզական հավաքներին եւ մրցաշարերին մասնակից հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների՝ տվյալ ժամանակահատվածի բացակայությունները:

Մանվել Գրիգորյան, 54 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 09-Ն 20.05.2020 թ. հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգի» 8-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի՝ հեռավար ուսուցում է կազմակերպվում այն սովորողների համար, որոնք հանրապետական կամ միջազգային առարկայական կամ մարզական օլիմպիադաների, մրցաշարերի կամ առաջնությունների կամ ուսումնամարզական հավաքների, մշակութային միջազգային մրցույթների կամ փառատոների մասնակիցներ են եւ հաճախ են բացակայում առկա դասապրոցեսից:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի



Աղավնատուն-Ամբերդ ճանապարհին Kia-ն բախվել է հողաթմբերին ու քարերին. 2 վիրավորներից մեկը հիվանդանոցում մահացել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	+ 4 + 8 + 16 + 20
	Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 16 + 20
	Կոտայքի նախալեռներ	+ 8 + 11 + 17 + 20
	Գեղարքունիք	+ 4 + 9 + 15 + 20
	Լոռի	+ 6 + 10 + 19 + 22
	Տավուշ	+ 7 + 10 + 19 + 22
	Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 16 + 19
	Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 + 16 + 21

	Արարատ	+ 8 + 11 + 18 + 21
	Արմավիր	+ 8 + 11 + 20 + 22
	Վայոց ձորի լեռներ	+ 5 + 9 + 16 + 19
	Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 12 + 20 + 22
	Սյունիքի լեռներ	+ 4 + 8 + 16 + 19
	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 10 + 21 + 25
	Սյունիքի հովիտներ	+ 12 + 16 + 26 + 29
	Երեւան	+ 10 + 12 + 20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.10.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*